

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կաթուղիկոտական ընտրութեանց համար ըստ տրամադրութեան պոլոժենիայի ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր թեմից ընտրուում են մի մի աշխարհական պատգամաւոր: Տաճկաստանում Սահմանադրութեամբ ճշդիւ որոշուած են թէ ընտրողները և թէ ընտրելիները: Հիմնական հակասութիւնը՝ որ կար Սահմանադրութեան և Պոլոժենիայի միջև՝ թեմական պատգամաւորների վերաբերութեամբ՝ այժմն մեծ յոյս կայ, որ նոյն իսկ Տաճկահայերի կողմից վերացուի, որովհետև նրանք արդէն զգացել են, առանց կուսակցութեանց խորութեան, որ այս կէտում Պոլոժենիայի պահանջները անհամեմատ իրաւացի են: Մեր տաճկահայ եղբայրներին մասնաւորապէս այս կէտում ցանկանում ենք աչալըջութիւն և արիութիւն: Ինչ վերաբերում է Առևտատանի և Պարս-Հնդկական թեմերին, այս տեղերում Մարմնաւոր Իշխանութիւնները ամեն զիւրութիւն ընձեռում են ընտրութիւնների կանոնաւորութիւնը երաշխաւորելու համար: Մնում է միմիայն՝ Գերապատիւ Առաջնորդներին և որանց փոխանորդներին ու Գործակալ կամ Գարեկարգիչ քահանաներին հսկել անաչառութեամբ, և առանց որ և է կուսակցական ոգու տալ ժողովրդին ամեն միջոց և հնարաւորութիւն կատարելու իրենց ընտրողական պարտքը խղճի մտօք և ամենայն ազատութեամբ: Գժբալգաբար մինչև այժմն դեռ չկան մանրամասն մշակուած կանոններ ժողովրդական ընտրութիւնների վերաբերութեամբ: Այդ ընտրութիւնները կատարուել են և այժմն էլ կատարուելու են ընդունուած Սահմանադրութեան համեմատ, Հոգևոր Իշխանութեան հակողութեան տակ, որ կարևոր դէպքում կարող է զխնել և մարմնաւոր իշխանութեան աջակցութեանը: Մարմնաւոր իշխանութիւնն էլ իւր կողմից տուել է առանձին հրահանգներ այդ ընտրութիւնների կատարման վերաբերութեամբ (տես Արարատ, 1883, եր. 480—483): Աւելի ուշադրութեան արժանի է 1884-ի Թիֆլիզի թեմական Առաջնորդի

Տե՛ղ Նշով Նշով արեւելեանը, որով առաջին անգամ փորձ է լինում Հոգևոր Իշխանութեան ներկայացուցի կողմից որոշ կանոնների ենթարկել ազգային եկեղեցական բոլոր ընտրութիւնները: Այդ շրջաբերականով առաջադրուած կանոնները պարտադիր են եղել Վրաստանի և Իմերէթի թեմում և այժմն էլ, եթէ չենք սխալուած, գործադրութեան մէջ են: Աւստի և հարկ անհրաժեշտ համարեցինք վերառաջել Արարատում այդ նշանաւոր Նշով արեւելեանը մասնաւոր որ ամեն կողմից հարցեր են լինում մեզ այդ մասին թէ մասնաւոր անձինքների և թէ մամուլի (Մշակ) կողմից, ցանկանալով միանգամայն որ ապագայ կաթողիկոսը իւր Հայրապետական կոնգակով աւելի մանրամասն և բոլոր թեմերի համար ընդհանուր գործածական հրահանգներ որոշէ, մտցնելով գիտութիւնից մշակուած ընտիր ձևերը ընտրութեանց կանոններում, որով միայն հնարաւոր է արգարութեան և հաւասարութեան սկզբունքների գործադրութեանը կատարելապէս երաշխաւորել: Ապագայ կաթողիկոսին է մնում անշուշտ և մի ուրիշ մեծ բարենորոգում ընտրողական գործին վերաբերեալ,—այդ թեմական աշխարհական պատգամաւորների թուի համեմատական կայուցանելն է թեմի ընդհանուր ժողովրդի թուին: Անարգարութիւն է անշուշտ որ օրինակ՝ Երեւանի պէս մի թեմ որը մի քանի հարիւր հազար հայ ժողովուրդ ունի, ունենայ մի պատգամաւոր, նոյնպէս մի պատգամաւոր ունենայ և Տաճկաստանի մի յետ ընկած թեմ, որի ժողովուրդը հազիւ մի կամ երկու տասնեակ հազարի է հասնում: Բայց առ այժմն պէտք է ցանկալ, անկասկած, տիրող օրէնքի ճշգրիտ գործադրութիւնը բարեփոխումները սպասելով ապագայից:

Ա հ ա ա յ Գ շ Բ ջ ա բ ե ր ա կ ա ն ի կ ա ն ո ն ն ե ր ք .

Ա .

Ըստ կանոնաց և բաղմագարեան նուիրական սոխորութեան Հայաստանեայց Առաքելական ս. եկեղեցւոյ ամենայն ազգային հոգևոր ընտրութիւնք կատարին անխտիր մասնակցութեամբ հայ ժողովրդեան ամենայն դասակարգի. իսկ պահպանութիւն կարգաց օրինաւոր մասնակցութեան գործ է հոգևոր իշխանութեան և պաշտօնէից նորին:

Բ .

Մասնակցութեամբ ժողովրդեան կատարին ընտրութիւնք թեմական պատգամաւորի անգամնց հոգաբարձութեան հոգևոր դպրոցաց, խնամատարութեան աղքատ ծխոց և ծխական խորհրդոց, եթէ իցեն, երեցփոխանաց և հաշուատեսաց եկեղեցեաց և առհասարակ ամենայն պաշտօնէից ի պէտս հաստատութեանց ընդ տեսչութեամբ հոգևոր իշխանութեան եզելոց:

Գ .

Վասն ամենայն ազգ. հոգևոր ընտրութեանց ի քաղաքիս Տրփխեաց ամսօրեայ աւուրքք յառաջ, ըստ կարգադրութեան թեմական Առաջնորդի, ծանուցանի յեկեղեցիս Հայոց և ի պարբերական թերթիս ի գիտութիւն ժողովրդեան, իսկ ի գաւառական քաղաքս և գիւղօրայս թեմիս ըստ կարգադրութեան Փոխանորդաց Առաջնորդի և վերատեսչաց բարեկարգութեան եկեղեցեաց:

Դ .

Յետ ծանուցման միաբան քահանայք իւրաքանչիւր եկեղեցւոյ վուժան կազմել առանձինն առանձինն զցօւցակս ծխոց իւրեանց *) և ներկայացուցանել յառաջնորդանիստ քաղաքիս՝ կար-

*) Պատասխանատու վասն ճշտութեան անուանց և թուոց ծխոցն է ծխատէր քահանայն:

գելոյն յԱռաջնորդէ թեմիս Մասնաժողովոյ. իսկ ի գաւառական քաղաքս՝ Փոխանորդաց, վերատեսչաց բարեկարգութեան, կամ ցուցելոցն ի նոցանէ անձանց, որք վաւերացուցեալ զցուցական վերադարձուցանեն առ նոսա յաղագս համեմատութեանն ըստ թ. յօդուածոյ:

Ե.

Եթէ պէտք իցեն, նաև տամսակօք մարթ է հրաւիրել զժխականս յընտրութիւն, միայն ըստ կարգադրութեան հոգևոր իշխանութեան:

Զ.

Ի նշանակեալն աւուր և ժամու ծխականք իւրաքանչիւր եկեղեցւոյ ժողովին յեկեղեցիս իւրեանց ի կատարել զընտրութիւն ժողովրդական երեսփոխանաց: Մասնակցութիւն ժամաւորաց միանգամայն արգելեալ լինի:

Է.

Յանդամոց իւրաքանչիւր անբաժան գերդաստանի մի միայն մասնակցէ ընտրութեանն:

Ը.

Ընտրող և ընտրելի չկարեն լինել նախ՝ որք տակաւին շարունակեն զուսմունս իւրեանց. երկրորդ՝ որք ըստ կարգադրութեան հոգ. ծայրագոյն կամ թեմական իշխանութեան մերժեալք են ի ծառայութենէ ընդ նոյն տեսչութեամբ, իբրև վնասակարք իրաւանց և շահուց եկեղեցւոյ:

Թ.

Ի նշանակեալն աւուր յետ ժամերգութեանն, որք ի կոչն եկեալ են ծխականք ներկայանան ծխատէր քահանայից իւրեանց, որք համեմատեալ զանուանս և զազգանուանս նոցա ընդ վաւերացուցեալ ցուցակաց իւրեանց, ընթեռնուն ի լուր ամենեցուն. յետ այսորիկ՝ որք չունին զիրաւունս մասնակցութեան յընտրու-

թիւնն, եթէ չկամին մեկնիլ անտի, պարտին առանձնանալ ի մի վայր. և մնացեալքն մատչին ի գործ ընտրութեանն:

Ժ.

Ի գէսս որ և է ազգ. հոգևոր ընտրութեանց ժողովրդականք իւրաքանչիւր եկեղեցւոյ Տփսիսի *) ընտրեն զերիս ներկայացուցիչս կամ երեսփոխանս, որք պարտին լինել միայն ի ծխականաց եկեղեցւոյ. ծուխ միոյ եկեղեցւոյ չկարէ ընտրիլ ներկայացուցիչ ծխոց այլ եկեղեցւոյ:

ԺԱ.

Ընտրութիւնդ այդ կատարի ի ներկայութեան քահանայից եկեղեցւոյ. ընտրողացն բաժանեն զթերթիկս թղթոյ, իրաւամբ նշանակելոյ իւրաքանչիւրումն զերիս անուանս. յետ որոյ ժողովելոյ զայնոսիկ, նախ համեմատեն զթերթիկսն ընդ թուոյ ընտրողաց, և ապա ընթեռնուն զնշանակեալ անուանս. առաջին երեք ստացողքն բազմութեան ձայնից համարին ընտրեալ երեսփոխանք ծխոց. և երկուքն յետ նոցա փոխանորդք, որք ի պահանջել հարկին լնուն զթիւ բացակայող երեսփոխանաց. և անմիջապէս կազմեալ զընտրողական թերթն՝ ստորագրեն և միաբան քահանայք և ընտրողք: Մինչև ցաւարտ ստորագրութեան ամենեցուն ոչ որ ունի իրաւունս մեկնելոյ ի տեղւոյն: Ընտրութեանս նախագահէ աւագ կամ ժամօրհնող քահանայն:

ԺԲ.

Յաւարտելն զստորագրութիւնն աւագ կամ ժամօրհնող քահանայն ստանայ զընտրողական թերթն և զցուցակս ծխոց իւրաքանչիւր քահանայի (զոր յետս ստացեալ իցէ ի Մասնաժողովոց մեկնականաց լիարդս մեկնականաց ծխոց մեկնականաց):

*) Առեսանաց անապատն քաղաքիս չը համարի առանձին ծխական եկեղեցի, և քահանայ նորին է միաբան Մողնւոյ եկեղեցւոյ, յորոյ ի մատեանս և նշանակէ զօրինակատարութիւնս իւր. վաւերոյ և յաւուրս ընտրութեանց ընդ ծխոց իւրոց ներկայ լինի ի նմին եկեղեցւոյ:

վոյն, առ ի նշանակել զեկաւորս ի ծխոցն) և ընդ ձեռն վերատեսչի բարեկարգութեան եկեղեցեաց քաղաքամասին իւրոյ ի նմին իսկ աւուր առաքէ ի Մասնաժողովն ի ներկայացուցանել թեմ՝ Առաջնորդին:

ԺԳ.

Ընտրեալ ներկայացուցիչք ժողովրդեան Տփլիսի ի նշանակեալն աւուր ժողովին առ Առաջնորդն թեմիս և ընդ նորուն նախագահութեամբ կատարեն, առ որ հրաւիրեալքն են, զընտրութիւնն հոգաբարձուաց Ներսիսեան աղգ. հոգևոր դպրոցի թեմական պատգամաւորի *) կամ պաշտօնէից այլ հաստատութեանց: Ի ժողովին նոցա բաժանին ամենեցուն թերթիկք թղթոյ. եթէ ընտրութիւն թեմ՝ պատգամաւորի է՝ ի նշանակել իւրաքանչիւրումն զմի անուն. յաւարտ որոյ համեմատեալ զթերթիկսն ընդ թուոց ընտրողոյ՝ ընթեռնուն ի ձայն դանուանս նշանակեալս, և առաջին չորս ստացողք բաղմութեան ձայնի ենթարկին գաղտնի քուէարկութեան. յորոց առաջին բաղմաձայնն համարի պատգամաւոր և երկրորդն փոխանորդ (կանդիտատ). իսկ եթէ հոգաբարձուաց է՝ ի նշանակել զերկուսասան անուանս և յետ կատարման համեմատութեան ըստ վերջնոյն՝ վեշաասան ստացողք բաղմութեան ձայնից ենթարկին քուէարկութեան. յորոց առաջին երկուսանքն համարին հոգաբարձուք, և չորքն յետ նոցա—փոխանորդք: Յընտրութիւնս այլ պաշտօնէից նշանակին անուանք ըստ թուոյ անդամոց այնք հաստատութեան, ոյր վասն ընտրութիւնն կատարի: Երեսփոխանք չև ևս ստորագրեալ զթերթն չկարեն մեկնիլ ի բաց:

ԺԴ.

Նախ քան զքուէարկութիւնն հարցանի համաձայնութիւն քուէարկելի անձանց:

*) Ի գործ ընտրութեան թեմ՝ պատգամաւորի ընդ Տփլիսեացւոց մասնակցն և երեսփոխանք գաւառաբնակ Հայոց, ըստ թէ. յօդուածոյ:

ԺԵ.

Հոգաբարձու կարեն ընտրիլ թէ քահանայք և թէ աշխարհականք, որք վայելեն զյարգանս և զլստահութիւն ժողովրդեան:

ԺԶ.

Արուհետե գաւառական քաղաքք թեմիս իւրաքանչիւրն զմի կամ ոչ առաւել քան զերկուս և զերիս ունին եկեղեցիս, ուստի վասն նոցա սահմանի յետագայս— Աւր մի եկեղեցի է, ժողովրդականք հրաւիրեալք ըստ կարգի գ. յօդուածոյ կատարեն զընտրութիւնն. իսկ ուր երկու կամ առաւել են եկեղեցիք, ծխականք իւրաքանչիւր եկեղեցւոյ ընտրեն զերկուտասան ներկայացուցիչս ընդ նախագահութեամբ փոխանորդի Առաջնորդի կամ վերատեսչի բարեկարգութեան եկեղեցեաց կամ աւագ քահանայի, պահպանութեամբ Զ. Է. Ը. Թ. և ԺԱ. յօդուածոյ հրահանգիս:

ԺԷ.

Ի դէպս ընտրութեան թեմ. պատգամաւորի գաւառաբնակ ազգայինք առաքեն զերկուս երկուս ներկայացուցիչս ըստ տեղեաց հոգևոր կառավարութեանց և վերատեսչաց բարեկարգութեան եկեղեցեաց, համաձայն կարգադրութեան թեմ. Առաջնորդի:

ԺԸ.

Ընտրութիւն երեսփոխանաց եկեղեցեաց կատարի համաձայն հրահանգին կազմելոյ ի Յանձնաժողովոյ Առաջնորդական յանձնարարութեանց, բացառութեամբ մասնակցութեան ժամաւորաց, որ յիշատակեալն է ի ծանօթութեան Գ. յօդուածոյ, և որ խափանի այսուհետե ըստ զօրութեան հրահանգին այսորիկ:

ԺԹ.

Յամենայն ընտրողական ժողովս զգուշաբար յարգի պահպանութիւն կարգի և վայելչութեան:

Ի.

Ընտրութիւնը օրինաւոր համարին միայն պահպանութեամբ վերոյգրեալ կանոնաց:

Ամսիս 7-ին Նորին Ամենապատուութիւն Տ. Տեղակալը բարեհաճեց աւագ սարկաւազութեան աստիճան տալ Լճմիածնի երկու նոր ընդունուած միաբաններին՝ Լևոն Խոջայեանին և Տիգրան Բաղդասարեանին, այլ և երկու քահանայացուներին՝ Թադէոս Տէր Մանուէլեանցին և Համբարձում Ստամբուլցեանցին: Չորրորդ աստիճան շնորհեց ձեմարանի աստուածաբանական գիտութեանց ուսուցիչ պ. Սարգիս Տէր Վաբրիէլեանցին և ձեմարանի նախկին աշակերտ Մկրտիչ Զաքարեանցին:

Ամսիս 8-ին՝ Կիւրակէ օրը Նորին Բարձր Սրբազնութեան ձեռնադրութեամբ կուսակրօն արեղայութեան աստիճանին արժանացաւ բարեշնորհ Լևոն Խոջայեանցը, պահելով նոյն Լևոն անունը և քահանայութեան աստիճան ստացան վերոյիշեալ երկու քահանայացուները Տէր Խորէն (Համբարձում) և Տէր Սիոն (Թադէոս) անուանակոչութեամբ: Բարեշնորհ Լևոն Աբեղան ձեմարանի նախկին ուսուցիչ է, ծննդեամբ Նոր-Նախիջևանցի Մոսկուայի համալսարանից, մատեմատիկոս: Վերջին ժամանակս Աւագ ուսուցիչ էր Խզգիրի ուսումնարաններում:

Տէր Խորէն և Տէր Սիոն քահանաները, ձեմարանի նախկին Սաներից են, երկար տարիներ ուսուցչութիւն արած Հայոց դպրոցներում: Առաջինը երեւանի թեմական դպրանոցի հոգաբարձութեան քարտուղարն էր, և ձեռնադրուեց կարս քաղաքի վրայ, երկրորդը ձեմարանի անուեսն էր և ձեռնադրուեց իւր հայրենի Բլուր գիւղի վրայ:

Շնորհունակ Տիգրան Սարկաւազը նմանապէս ձեմարանի նախկին սաներիցն է, ծննդեամբ Ռումինիայի Ֆոքչան քաղաքից և